ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՃՈՃԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ճոճկան համայնք, ՀՀ, Լոռու մարզ, գ. Ճոճկան, Հեռ.
(093)713010 , chochkan2011@mail.ru

N 132
29 սեպտեմբեր 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Ճոճկան համայնքի ավագանու 2017թ հոկտեմբերի 4-ին կայանալիք նիստի 34-39 որոշումների նախագծերը:

Առդիր 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Թամազյան

ՆԱԽԱԳԻԾ 34-Ա

ՃՈՃԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
04.10.2017Թ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6 -րդ մասով

Հաստատել Ճոճկան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 4-ի նիստի օրակարգը

1. Ճոճկան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 4-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

2.Ճոճկան համայնքի 2017թվականի բյուջեյի երրորդ եռամսյակի կատարման մասին:

3. Ճոճկան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30 -ի «Ճոճկան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 50 -Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

4. Ճոճկան համայնքում ջրաչափեր տեղադրելու, ջրամատակարարման ծառայությունների մատուցման պայմանագրի ձևի հաստատման և խմելու ջրի սակագնի սահմանման մասին

5.Հողի հարկի տույժերից ազատելու մասին

6. Ճոճկան համայնքում ծնվող յուրաքանչյուր երեխային միանվագ գումար հատկացնելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ՄՈՒՍԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 35-Ն

ՃՈՃԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԼԶԵԿ. ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1 կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով

Ընդունել՝ ի գիտություն Ճոճկան համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ՄՈՒՍԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 36-Ն

ՃՈՃԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 -Ի «ՃՈՃԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 50 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԻԶԵԿ. ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՉՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

1.Ճոճկան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30 -ի «Ճոճկան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 50 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱՉՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ՄՈՒՍԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 37-Ա

ՃՈՃԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՋՐԱՉԱՓԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ, ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍԱԿԱԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով, նպատակ ունենալով բարելավել համայնքի ջրամատակարարումը և ապահովել համայնքի սեփականություն հանդիսացող ջրատնտեսական համակարգերի պատշաճ և կանոնավոր շահագործումն ու պահպանումը

1. Հաստատել Ճոճկան համայնքի կողմից համայնքի բնակիչներին ջրամատակարարման ծառայություններ մատուցելու պայմանագրի ձևը /հավելված 1/

2.Ջրամատակարարման ծառայությունների համար սահմանել 153 /հարյուր հիսուներեք/ դրամ/խմ սակագին, որը ենթակա է վերանայման տարեկան մեկ անգամ,

3. Սույն որոշման կետում նշված ջրամատակարարման ծառայություններ մատուցելու պայմանագրի դրույթների խախտման համար սահմանել հետևյալ տույժերն ու տուգանքները

ա/50000 /հիսուն հազար/ դրամ ջրաչափի աշխատանքի խափանման, ցուցմունքների կեղծման կամ ջրաչափի կողանցմամբ միացում կատարելու համար,

բ/ 100000 /հարյուր հազար/ դրամ համայնքի ջրամատակարարման ցանցին ինքնակամ միացում կատարելու կամ ջրամատակարարման ենթակառուցվածքներին վնաս պատճառելու համար, որի դեպքում բնակիչը պարտավոր է հատուցել նաև պատճառված վնասի չափը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ՄՈՒՍԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 38 -Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

ՀԶԵԿ. ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Գույքահարկի մասին օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Ճոճկան համայնքի ավագանու 26.04.2013թ թիվ 21-Ա որոշումը

Ճոճկան համայնքի ներքոհիշյալ հարկատուներին, որոնք չունեն հողի հարկի պարտք, սակայն ունեն հաշվարկված տույժեր, նրանց ազատել հողի հարկի տույժերից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ՄՈՒՍԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 39-Ա

ՃՈՃԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԶԱՎԱԿԻ ԾՆՎԵԼՈՒՑ ՆՊԱՍՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԶԵԿ. ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 7 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ճոճկան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ12-Ա որոշմանը համապատասխան

1.Ճոճկան համայնքի բյուջեի 10.4.1-ի 4729 հոդվածից հատկացնել զավակի ծնվելուց նպաստ՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ՄՈՒՍԻՆՅԱՆ